

երբեմն իրենց սեփական ուժերուն վրայ յենած, կ'ըմբոստանային վանի կուսակալին դէմ՝ զայն պաշտօնանկ ընելու և նոյնիսկ կախել տալու աստիճան: Այսպէս՝ Քէօր Մուսթաֆա փաշան երբ երաշտութեան տարի մը պարտէզ մը անկել կուտայ բերդին ետև՝ անոր յատկացնելով քաղաքին ջուրը, խոճա Մարխաս անուն վանգուլի մը, 50—60 ազգակիցներու հետ, ձիարշաւ կը խաղայ այդ պարտէզին մէջ և զայն կը փճացնէ: Ապա երբ թուրք փաշան անկէ բացատրութիւն կը պահանջէ, նա փսէտով շրոսկի կը ներկայացնէ փաշային՝ ըսելով. «Այս գուժարը քու պարտէզէն ըստանալիք բերքերու արժէքն է՝ տասնապատիկ աւելի. ահա ես կը հատուցանեմ ձեր վնասը, իսկ քաղաքի ալ կը դարձնեմ իր իրաւունքը, ոռոգման ջուրը»: Փաշան այս համարձակ պատասխանին վրայ, ըստ ժամանակի սովորութեան, շալ մը կը պարգեւէ անոր իբր խալաթ (նուէր), զոր նա դուրս ելլելով պարտին կը կապէ: Երբ փաշան իմանալով՝ կը հարցնէ այս անարգանքին պատճառը, ան կը պատասխանէ. «պարտիս կապեցի, որ ուժով մնամ»: Ասոր վրայ երկրորդ շալ մը եւս կ'ստանայ գլխին կապելու համար»:

Ասիկա ցոյց կուտայ գերազանց ոյժը Ալթունենց խոճա կամ Չէլէպի Մարխասի (1). որ թէ՛ նիւթապէս և թէ՛ բարդապէս մեծ զօրավիգ մը եղան է

(1) Գոթախաթար իր վրայ աւելի տեղեկութիւն չունին: Կր կասկածիմ, թէ 1678ին այս անձը կախաղան բարձրացած է, վասն զի Անցք վասպուրական Աշխարհի (Գիտան Ժ. էջ 107) եւ Յարապետան ժամանակագիր (Գիտան Ժ. էջ 124) կը յիշեն, թէ կախուած է խոճա Ալխար «որոյ մականունն լէշկէր ասէին» եւ որուն համար կ'ըսէին, թէ «բազում բարութիւնն արար հայոց եւ բարի անուն եթող յեա իւր»: Արգեօֆ խոճա Մարխաս եւ խոճա Ալխաս նոյն անձերը չեն: